ՄԵԾԱՄՈՐԻ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՄԱՏՐԱՆ ՕԾՈՒՄԸ

Հունվարի 15-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռքով օծվեց Հայաստանի ատոմային էլեկտրակայանի մատուռ-աղոթատունը /հեղինակ՝ ճարտարապետ Հակոբ Բաբախանյան/:

Ատոմակայանի մուտքին Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Արմավիրի մարզպետ Սեդրակ Հովհաննիսյանը, ատոմակայանի տնօրեն Սուրեն Ազատյանը և Նորին Սրբությանը առաջնորդեցին դեպի նորակառույց մատուռ: Մեկուկես տարի առաջ էր, ՀԱԷԿ-ի վերաբացման առիթով, երբ Ամենայն Հայոց Հովվապետը հայտնեց, որ Մայր Աթոռի հովանավորությամբ ատոմակայանում կկառուցվի աղոթատուն, որպես «Աստծո ներկայության Անլռելի զանգակատուն»:

Օծման ընթացքում

Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռքով մատուռ-աղոթատան օծումից և օրհնությունից հետո ատոմակայանի դահլիճում տեղի ունեցավ հանդիսություն: Այն բացեց ատոմակայանի տնօրեն Սուրեն Ազատյանը: Պրն. Ազատյանը շնորհակալության ու երախտագիտության խոսք ուղղեց Մայր Աթոռին և անձամբ Գարեգին Ա Վեհափառ Հայրապետին՝ այդ անգնահատելի ձեռնարկի համար: Հաստատության աշխատակիցներին նորարաց մատուռի առթիվ շնորհավորանքի խոսք ասաց Արմավիրի թեմական առաջնորդ Ասողիկ եպս. Արիստակեսյանը:

Բոլոր շնորհավորանքների և ջերմ խոսքերի ամփոփումը եղավ Նորին

Սրբություն Գարեգն Ա Կաթողիկոսի հայրապետական պատգամը: Վեհափառ Հայրապետը նշեց, որ մատուռ-աղոթատան ծնունդով Մայր Աթոռը իր փոքրիկ բաժինն է բերում հայրենաշինության նվիրական գործին, և պատգամեց նորանոր իրագործումներով և ձեռնարկներով արժեցնել մեր ժամանակաշրջանը:

Գարեգին Ա Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Զավեն արք. Չինչինյանը, ԱՄՆ-ի հայոց Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը, Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Գիսակ արք. Մուրադյանը և գավազանակիր Արտակ արդ. Տիգրանյանը:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ